


# *Տեղեկատու թիվ 03 (մարտ2022թ.)*
## *Newsletter N 03*

---

**Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ**

## Հայ դատի ամփոփագրեր

մարտի 1-15

մարտի 15-ապրիլի 2

# Հայ Դատի հանձնախմբերի համար Արցախը շարունակում է մնալ առանցքային առաջնահերթություն. Գևորգ Ղուկասյան




Աշխարհասփյուռ Հայ Դատի մարմինների աշխատանքի մեջ Արցախի հարցը շարունակում է առանցքային տեղ զբաղեցնել, և մեր աշխատանքների ճնշող մեծամասնությունն ուղղված է հենց Արցախի շահերի պաշտպանությանը՝ Yerkir.am-ի հետ հարցազրույցում ասաց ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանը:
Նա օրերս է վերադարձել Արցախից Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի ղեկավար Գասպար Կարապետյանի և ՀՅԴ Հունաստանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հռիփսիմե Հարությունյանի հետ: Տեղում

ծանոթացել են իրավիճակին, հանդիպել պատասխանատու պաշտոնյաների հետ:

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

# ANCA Demands Enforcement of Section 907 against Azerbaijan following U.S. Report Confirming Multiple Violations of Presidential Waiver Authority




The Armenian National Committee of America (ANCA) renewed calls on Congress to strike presidential waiver authority of Section 907 restrictions on U.S. assistance to Azerbaijan, in the wake of this week's long-awaited Government Accountability Office (GAO) report revealing that the State Department consistently failed to inform Congress of the impact of over $164 million in assistance to Baku on the military balance between Azerbaijan and Armenia.
"The human consequences of the terrible war in Nagorno-Karabakh underscore the deep concerns that I have long had about providing U.S. assistance to Azerbaijan," said Senate Foreign Relations Committee Chair Robert Menendez (D-NJ), who had requested the report. "This report finds that, for several years, the State Department consistently failed to provide sufficient details about the quantity of assistance to Azerbaijan, the status of the military balance, and the impact of the assistance on peace negotiations. These findings are further proof that the status quo is unacceptable, and we must exercise additional scrutiny over the U.S. government's ongoing provision of assistance to Azerbaijan. In the coming weeks, I will be renewing my efforts for the State Department to reconsider any future planned assistance to Azerbaijan, respect Section 907 of the FREEDOM Support Act, and improve its reporting to Congress in the future."

Text Link

# ԱՄՆ-ի վարչակազմը խախտել է օրենքը՝ Ադրբեջանին 164 միլիոն դոլարի ռազմական օգնություն տրամադրելով. սենատոր Մենենդեսի բացահայտումը




Հայ Դատի Ամերիկայի հանձնախումբը հայտնում է, որ Պետդեպարտամենտը ձախողել է Ադրբեջանի կառավարությանը ԱՄՆ-ի աջակցության վերանայման համար հաշվետվողականության պահանջների կատարումը:
ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, սենատոր Ռոբերտ Մենենդեզը մարտի 2-ին հրապարակել է Կառավարության հաշվետվողականության գրասենյակի (GAO) զեկույցը: Ըստ նախագահ Մենենդեզի, ԱՄՆ-ի վարչակազմը խախտել էօրենքը (907-րդ բանաձևը)՝ Ադրբեջանին 164 միլիոն դոլարի ռազմական օգնություն ուղարկելով (2002-2020 թթ.): GAO-ի զեկույցը «բացահայտեց, որ մի քանի տարիների ընթացքում Պետքարտուղարությունը և Պաշտպանության նախարարությունը չեն ապահովել Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռության վրա ԱՄՆ-ի աջակցության ազդեցության մասին Կոնգրեսին ներկայացվող հաշվետվության օրենքով սահմանված պահանջները»,- ասվում է սենատորի հաղորդագրության մեջ:

Text Link

## ANCA Mobilizes Community and Congressional Allies behind Armenian Caucus Call for $50 Million in U.S. Artsakh Aid




The Congressional Armenian Caucus called on U.S. House appropriators this week to allocate $50 million in U.S. assistance for Artsakh (Nagorno Karabakh), echoing policy proposals put forth by the Armenian National Committee of America (ANCA) to address pressing humanitarian needs in Artsakh as part of the long-delayed Fiscal Year 2022 foreign aid bill.
In a letter to Senate and House Appropriations Committee Chairs and Ranking Members, Congressional Armenian Caucus Co-Chairs Frank Pallone (D-NJ) and Jackie Speier (D-CA) and Vice-Chair Adam Schiff (D-CA), called for $50,000,000 to be "made available for assistance in Nagorno-Karabakh, used to provide humanitarian assistance and resettlement support to the Armenian victims of the Nagorno-Karabakh conflict, both those residing in and those displaced from Nagorno-Karabakh. Such assistance will help to meet basic human needs, including maternity healthcare and drinking water programs."

Text Link

## Senator Bob Menendez Calls Out State and Defense Departments for Covering Up Impact of US Military Aid to Azerbaijan




Senate Foreign Relations Committee Chair Bob Menendez (D-NJ) pressed the Departments of State and Defense on the Administration's failure to meet statutory reporting requirements to Congress on the impact of U.S. assistance on the military balance between Armenia and Azerbaijan, as mandated by Section 907 of the FREEDOM Support Act, reported the Armenian National Committee of America (ANCA).
"It's deeply concerning as Azerbaijan's actions in the Nagorno-Karabakh region have led to the deaths of more than 6000 people extracted a steep toll on Armenians, uprooting them from others thousands from their homes," stated Chairman Menendez during a Senate Foreign Relations Committee hearing earlier today, which featured testimony by Department of Defense Assistant Secretary for Strategy, Plans, and Capabilities Dr. Mara Karlin and State Department Assistant Secretary for Political-Military Affairs Jessica Lewis.

Text Link

## Congress Calling for $45 Million in FY22 U.S. Aid to Armenia; Additional Oversight on U.S. Aid to Azerbaijan

The House and Senate have agreed to send $45 million in U.S. aid to Armenia and $2 million in demining assistance for Artsakh as part of the Fiscal Year 2022 (FY22) Foreign Aid Bill adopted this week by the U.S. House. The sweeping appropriations




measure also calls for a report assessing the possibilities of additional attacks against Artsakh (Nagorno Karabakh) by a South Caucasus country and additional oversight of how funds to Armenia and Azerbaijan are used, reported the Armenian National Committee of America (ANCA).

"The FY22 foreign aid bill represents yet another missed opportunity for a robust U.S. aid package – of at least $50 million – in direct humanitarian aid to the more than 100,000 Armenians ethnically cleansed by Azerbaijan from Artsakh," said ANCA Executive Director Aram Hamparian. "This long-overdue aid – which we are already working to secure in the FY23 bill – is desperately needed within Artsakh to help Armenian families rebuild their lives and resettle in safety upon their indigenous homeland."

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ձևավորել է տարբեր ժողովուրդների համայնքային կազմակերպությունների կոալիցիա՝ բացառելու համար ամերիկյան ռազմական տեխնոլոգիաների վաճառքը Թուրքիային և ռազմական օժանդակությունը Ադրբեջանին




Տևական ժամանակահատված է, ինչ Հայ դատի Ամերիկայի Միացյալ Նահանգների հանձնախումբը աշխատում է Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակության բոլոր տեսակներից զրկելու, ինչպես նաև Թուրքիային ամերիկյան ռազմական տեխնոլոգիաների վաճառքը կանխելու ուղղություններով: Ասվածը ենթադրում է բազմավեկտոր աշխատանք՝ սկսած համայնքային համախմբումից մինչև Կոնգրեսի մի քանի հանձնաժողովների, պետական և պաշտպանության դեպարտամենտների հետ հարաբերություններ և այլն: Խնդիրն ավելի է բարդանում Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելու պարագայում:
2020թ. Արցախի նկատմամբ ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ժամանակ, ամերիկյան տեխնոլոգիաների կիրառումը, ի դեմս «Բայրակթար» անօդաչուների առանձին դետալների և F-16 կործանիչների, ամերիկյան օրենսդրության կոպիտ խախտում է այն առումով, որ ԱՄՆ ոլորտային օրենսդրության համապատասխան՝ ԱՄՆ ռազմական արտադրանքը չի կարող կիրառվել երրորդ երկրի կողմից և հատկապես չի կարող կիրառվել թիրախավորելով խաղաղ բնակչությանը:

Text Link

## Բայդենի այս որոշումը կապ չունի Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմի մասին Հայաստանի կամ Ամերիկայի հայկական կազմակերպությունների դիրքորոշման հետ

Երկու շաբաթ առաջ ԱՄՆ Կոնգրեսը Հայաստանին $45 միլիոնի, Արցախին՝ $2 միլիոնի ֆինանսական օգնության առաջարկ էր ներկայացրել, ինչը ստորագրեց Ջո Բայդենը: Այդուհանդերձ, օրերս նա որոշում կայացրեց չավելացնել Հայաստանին տրվող օգնությունը և



հատկացնել այնքան, որքան նախորդ տարվա բյուջեով էր սահմանված՝ այն է՝ $24 միլիոն դոլար: Իսկ Արցախի օգնությունն ամբողջությամբ չեղարկեց: Մեզ համար սա անընդունելի է, քանզի Արցախը և Հայաստանը մինչ օրս շարունակական ագրեսիայի են ենթարկվում Ադրբեջանի կողմից և Հայաստանը, նամանավանդ՝ Արցախը, արժանի են ավելի մեծ չափով ֆինանսական օգնության:

Text Link

## Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

# Արցախի խորհրդարանի ղեկավարն ընդունել է Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանի ղեկավարած պատվիրակությանը




Մարտի 11-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանն ընդունել է Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանի ղեկավարած պատվիրակությանը:
Ողջունելով հյուրերին՝ Արթուր Թովմասյանը բարձր է գնահատել Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի հայանպաստ գործունեությունը՝ շեշտելով Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի օրակարգում «Լեռնային Ղարաբաղում պատմամշակութային ժառանգության ոչնչացման» մասին բանաձևի ներառման ու Ադրբեջանի վանդալիզմը դատապարտող բանաձևի ընդունման հարցում գրասենյակի կատարած իսկայական աշխատանքը:
Խորհրդարանի ղեկավարն անդրադարձել է 44-օրյա պատերազմին ու ետպատերազմյան իրողություններին, աշխարհաքաղաքական վերջին զարգացումներին, ընդգծել համազգային օրակարգ ստեղծելու անհրաժեշտությունը:
Գասպար Կարապետյանը մտահոգիչ է որակել Ադրբեջանի շարունակվող սադրանքները, շեշտել ամեն գնով արցախցուն Արցախում պահելու կարևորության մասին:

Text Link

# Հանդիպում ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահի և ՀՅԴ Հունաստանի ԿԿ ներկայացուցչի հետ



ՀՅԴ Արցախի Կենտրոնական Կոմիտեն մարտի 10-ին հանդիպում է ունեցել ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանի և ՀՅԴ Հունաստանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հռիփսիմե Հարությունյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանը:
ՀՅԴ Արցախի ԿԿ-ն ներկայացրել է Արցախում տիրող իրավիճակը, անվտանգային և հումանիտար հիմնախնդիրները: Մտքեր են փոխանակվել օտարերկրյա քաղաքական շրջանակներում և մասնավորապես եվրոպական

երկրներում ի նպաստ Արցախի աշխատանք ծավալելու կապակցությամբ:
Հյուրերը տեղեկացրել են իրենց այցելության ընթացքում Արցախի պետական պաշտոնատար անձանց հետ ունեցած հանդիպումների և ձեռքբերված պայմանավորվածությունների մասին:

Text Link

## Եվրախորհրդարանը ընդունեց բանաձև Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման վերաբերյալ




Մարտի 10-ին Եվրոպական խորհրդարանը (ԵԽ) հրատապ ընթացակարգով և ճնշող մեծամասնությամբ Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման վերաբերյալ բանաձեւ ընդունեց:
Մանրամասն անդրադառնալով խնդրի էությանը՝ ԵԽ լիագումար նիստի ընթացքում քննադատվեց Արցախում հայկական պատմամշակութային ժառանգության դեմ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը: Ադրբեջանի կողմից Արցախում մշակութային ժառանգության ոչնչացումը դիտարկվում է որպես այդ երկրում պետական մակարդակով տարվող, համակարգված հայատյաց քաղաքականության բաղկացուցիչ մաս:
Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձեւում առաջին անգամ օգտագործվում է «արմենոֆոբիա» եզրույթը: Շեշտվում է, որ մշակութային ժառանգության ոչնչացումից բացի Ադրբեջանում հայատյացության պետական քաղաքականության դրսևորումներից են նաև պատմության սրբագրումը, հայերի նկատմամբ բռնության փառաբանումը, Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային պահանջները, ինչը վտանգում է խաղաղությունը և խաթարում անվտանգությունը Հարավային Կովկասում:

Text Link

## Առաջին անգամ Եվրախորհրդարանն իր բանաձևում նշում է «արմենոֆոբիա» եզրույթը. Արցախի հուշարձանների խնդիրը նիստի օրակարգում է



«Լեռնային Ղարաբաղում պատմամշակութային ժառանգության ոչնչացման» մասին բանաձեւի նախագիծը ներառվել է Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի օրակարգ և վաղը նախատեսված է քվեարկությունը: ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակը հսկայական աշխատանք է տարել՝ հայանպաստ և Ադրբեջանի վանդալիզմը դատապարտող այս բանաձևը նիստ մտցնելու համար:
ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործադիր տնօրեն Հեղինե Էվինյանը Yerkir.am-ի հետ հարցազրույցում ասաց՝ ամիսներ տևող նպատակաուղղված և ակտիվ աշխատանքի արդյունք է արդեն այն փաստը, որ բանաձևի նախագիծը ներառվել է Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի օրակարգ:
«Այդ աշխատանքը շատ ակտիվ իրականացվել է ինչպես Բրյուսելում ՀՀ դեսպանատան կողմից, այնպես էլ, անշուշտ, Հայ Դատի Եվրոպայի գրասենյակն իր ամբողջ ուժով և բոլոր լծակներով մասնակցել է այս աշխատանքին»,-ասաց գրասենյակի գործադիր տնօրենը:
Նա նշեց, որ բանաձևը մանրամասն անդրադառնում է Արցախում պատմամշակութային ժառանգության ոչնչացմանը:

Text Link

## EAFJD urges UNESCO to act and protect Armenian cultural heritage in Nagorno-Karabakh




I am writing to you on behalf of the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) – a pan-European grassroots organization with chapters in 13 Member states of the EU and representing a significant part of the of European citizens of Armenian origin.
I would like to invite your attention to the European Parliament's recent resolution on the destruction of the cultural heritage in Nagorno-Karabakh which was adopted by overwhelming majority (635 in favour, 2 against, 42 abstentions) on 10. March 2022 (P9_TA(2022)0080).
The resolution "strongly condemns Azerbaijan's continued policy of erasing and denying the Armenian cultural heritage in and around Nagorno-Karabakh, in violation of international law and the recent decision of the International Court of Justice". The resolution also "acknowledges that the erasure of the Armenian cultural heritage is part of a wider pattern of a systematic, state-level policy of Armenophobia, historical revisionism and hatred towards Armenians promoted by the Azerbaijani authorities, including dehumanization, the glorification of violence and territorial claims against the Republic of Armenia which threaten peace and security in the South Caucasus".

Text Link

## Արցախը մեր անբաժանելի մասն է, և եթե այն հայաթափվի, Սյունիքը ու այնուհետև Հայաստանն ամբողջությամբ եթե չհայաթափվի էլ, Ադրբեջանի և Թուրքիայի ձեռքին կուլ է գնալու. Գ. Կարապետյան




Մարտի 9-11-ը Արցախում էր ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը՝ ՀՅԴ Հունաստանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հռիփսիմե Հարությունյանի և ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանի ուղեկցությամբ:
«Բավական երկար ժամանակ Արցախ չէի այցելել, և եկա, որպեսզի տեղում տեսնեմ կացությունը, խորհրդակցություններ ունենամ պետական պատասխանատուների հետ, Արցախին օգտակար լինելու նոր հնարավորությունները քննարկենք: Գոհ եմ այցելությունից, որովհետև իմացա բաներ, որոնք առանց այստեղ լինելու չէի իմանա: Անկեղծ խոսակցություն ունեցա բոլորի հետ»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում այցի մասին պատմում է Գասպար Կարապետյանը: Նախքան վերջին պատերազմը՝ ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի գրասենյակը տարին մի քանի անգամ քաղաքական ու հասարակական գործիչների, լրագրողների այցելություններ էր կազմակերպում դեպի Արցախ: Գասպար Կարապետյանի խոսքով՝ պատերազմից հետո դժվարացել է կացությունը, և պետք է հասկանալ նոր իրավիճակում արդյունավետ գործելու ուղիները:

Text Link

## Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Հայ դատի Կանադայի հանձնախումբը մարտի 12-ին առցանց հանդիպում էր կազմակերպել ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ դատի Կենտրոնական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանի հետ՝ քննարկելու ռուս-ուկրաինական պատերազմն ու դրա ազդեցությունը Հայաստանի և Արցախի վրա։ Հանդիպումն ունեցել է ֆեյսբուքյան սփռում։




# Հայ Դատի յանձնախումբը կոչ կ'ուղղէ Գանատայի կառավարութեան դատապարտելու Պաքուի յարձակողապաշտ ընթացքը



Գանատայի Հայ դատի յանձնախումբը Մարտ 29-ին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կ'անդրադառնայ Արցախի Հանրապետութեան մէջ լարուածութեան սրացման և խաղաղ հայ բնակչութեան դէմ Ատրպէյճանի բռնարարքներուն։ Յայտարարութեան մէջ յանձնախումբը խստօրէն կը դատապարտէ Արցախի դէմ Ատրպէյճանի որդեգրած յարձակողապաշտ քայլերը եւ կոչ կ'ուղղէ Գանատայի կառավարութեան անյապաղ դատապարտելու Պաքուի քաղաքական այս ընթացքը եւ օգտագործելու իր տրամադրութեան տակ գտնուող դիւանագիտական բոլոր միջոցները՝ զսպելու Ատրպէյճանի բռնութեան եւ տարածաշրջանը ապակայունացնելու փորձերը։
Հաղորդագրութիւնը կը նշէ, որ Մարտ 24-էն ի վեր սկիզբ առած ատրպէյճանական զինուած ուժերը մի քանի անգամ ներխուժած են Արցախի Հանրապետութեան տարածք՝ կոպտօրէն խախտելով 2020 թուականի նոյեմբերի հրադադարի պայմանագիրը և յստակ դարձնելով Արցախի մէջ ռազմական գործողութիւններու վերսկսման իրենց մտադրութիւնը։

Text Link

# Statement on Azerbaijan's Latest Aggression Against Artsakh

The Armenian National Committee of Canada condemns – in the strongest possible terms – Azerbaijan's unprovoked aggression in the Republic of Artsakh and calls upon the Government of Canada to condemn Baku and use all the diplomatic tools at its disposal to contain Azerbaijan's renewed attempts of violence and destabilization.
"Since March 24th, Azerbaijani forces have made several incursions into the territory of the Republic of Artsakh, grossly violating the November 2020 ceasefire agreement and signalling their clear intention for renewed hostilities in Artsakh.
"Using artillery and Bayraktar TB2 drones, Azerbaijan's latest aggression has caused several casualties, while forcing the peaceful Armenian population of nearby villages to flee their indigenous homes.

Text Link

# Գանատայի ծերակոյտի անդամ Լէօ Հուսաքոս կը դատապարտէ Արցախի դէմ ուղղուած ատրպէյճանական սադրանքները

Մարտ 30-ին կայացած Գանատայի Ծերակոյտի հերթական նիստին ելոյթ ունեցաւ Ծերակոյտի ընդդիմադիր Պահպանողական



խմբակցութեան ղեկավար Լէօ Հուսաքոսը եւ իր զեկոյցի ընթացքին խստօրէն դատապարտեց Արցախի դէմ որդեգրուած արտպէյճանական յարձակողապաշտ ընթացքը: Այս մասին կը հաղորդէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը:
Ծերակուտականը ներկայացնելով Արցախի իրավիճակը, յայտնեց, որ Մարտ 24-էն ի վեր ատրպէյճանական բանակը մի քանի անգամ ներխուժած է Արցախի տարածք՝ խախտելով 2020 թուականի նոյեմբերի հրադադարի պայմանագիրը և յստակ դարձնելով Արցախի մէջ ռազմական գործողութիւններու վերսկսման իրենց մտադրութիւնը:
Իր ելոյթին ընթացքին, ծերակուտական Հուսաքոս շեշտեց, որ մինչ Հայաստան կը յարգէ հրադադարի դրոյթները, ատրպէյճանական կողմը կը խախտէ հրադադարը յստակ դարձնելով, որ նպատակադրած է բռնութիւններու ճանապարհը: Աւելի՛ն Ատրպէյճանի նպատակն է Արցախի հայ բնակչութիւնը ահ ու սարսափի մատնելով բռնագաղթի ենթարկել:
Հուսաքոս շեշտեց նաեւ, որ միջազգային օրէնքներու համաձայն՝ Ատրպէյճանի յարձակողապաշտ ներկայ րնթացքը կը նկատուի պատերազմական յանցագործութիւն:

Text Link

## Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

# Hugh Mcdermott MP calls out Azerbaijan for campaign of psychological terror, cultural erasure and occupation in Artsakh




The Parliament of Australia's largest state was alerted to Azerbaijan's continuing campaign of terror and destruction against the indigenous Armenians of the Republic of Artsakh thanks to a speech by New South Wales Member for Prospect, Dr. Hugh McDermott MP, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).
The politician, who was added to the persona non grata blacklist of Azerbaijani dictator Ilham Aliyev after visiting Artsakh in 2019, spoke to the New South Wales Legislative Assembly about the urgency for Australia and the international community to act, with recent actions by Azerbaijan under the cover of the Russia-Ukraine crisis the cause of great concern.
"In the highlands of Western Asia, wedged between the Democratic Republic of Armenia and the brutal dictatorship of Azerbaijan, lies a cradle of civilisation, over 100,000 indigenous Christian Armenians who wake up every day fearing it is their last," McDermott said. "The date 27 September 2020 marked the commencement of this nightmare. On that day, Azerbaijan's' unprovoked, indiscriminate shelling of Artsakh, use of cluster munitions and Turkish-backed Syrian rebels commenced under the cover of a global pandemic."

Text Link

# Armenian National Committee of Australia briefed by Artsakh Foreign Minister and Human Right Defender

Members of the Armenian National Committee of Australia (ANC-AU) Board, Office and Branches held an emergency meeting with the Republic of Artsakh's Foreign Minister H.E. David Babayan and Human Rights Defender Mr. Gegham Stepanyan in light of the extreme humanitarian crisis unfolding in the country as a result of ongoing Azerbaijani terror and war crimes.
The virtual meeting on 31st March 2022 was organised by the ANC-AU, in conjunction with the Permanent Representative to the




Republic of Artsakh in Australia, Mr. Kaylar Michaelian.
Babayan and Stepanyan briefed the guests, who included ANC-AU representatives from Sydney, Melbourne and Perth, on Azerbaijan's most Mirecent acts of aggression against the Parukh region, resulting in the evacuation of hundreds of women and children as well, as the disruption of gas pipelines between Armenia and Artsakh, which has suspended vital heating to homes, schools and hospitals to the over 100,000 citizens of Artsakh.

Text Link

Ադրբեջանական հանցագործությունների արդյունքում Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամը մեղմելու շուրջ աշխատանքներ է իրականացրել նաև Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբը: Մարտի 14-ին հանձնախումբը նամակով դիմել է Ավստրալիայի արտաքին գործերի նախարար Մարիս Փեյնեին՝ խնդրելով Արցախին հատկացնել հումանիտար բնույթի օժանդակությունը: Հայ դատի հանձնախումբը այս առիթով նաև նախաձեռնել է սոցիալական արշավ՝ ներառելով ավստրալահայ համայնքին:




## Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

# Թանէր Աքչամ ներկայացուց իր վերջին գիրքը՝ «Սպանութեան հրահանգներ» խորագիրով




Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբի կազմակերպութեամբ Թանէր Աքչամ ներկայացուց իր վերջին գիրքը՝ «Սպանութեան հրահանգներ» խորագիրով Երկուշաբթի, 21 Մարտ 2022-ի երեկոյեան, Գոքինիոյ «Զաւարեան» կեդրոնին մէջ, Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբը եւ «Փափազիսիս» հրատարակչատունը միասնաբար կազմակերպեցին թուրք հանրածանօթ փրոֆէսոր եւ Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրող Թանէր Աքչամի «Սպանութեան հրահանգներ» գիրքի յունարէն հրատարակութեան ներկայացումը, որ կատարեց այս առիթով Աթէնք ժամանած նոյնիքն հեղինակը: Ելոյթին յատուկ ներկայութիւն եւ մասնակցութիւն ունեցաւ նաեւ Յունաստանի կրթութեան փոխնախարար եւ համալսարանի դասախօս պ. Ակելոս Սիրիդոս:
Հակառակ համավարակի ստեղծած պայմաններուն, սրահը կանուխէն լեցուն էր հայ եւ յոյն հոծ բազմութեամբ, որոնք եկած էին մօտէն լսելու թուրք ծանօթ մտաւորականը:

Text Link

## Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ

Արցախի նկատմամբ ադրբեջանական վերջին ագրեսիայի վերաբերյալ մարտի 30-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին է դիմել բարոնուհի Քերոլայն Քոքսը՝ կոչ անելով կառավարությանը անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր կանխելու ադրբեջանական վայրագությունները: Քոքսը բարձրացրել է Արցախում նոր էթնիկ զտումներ իրականացնելու ադրբեջանական մտադրությունը՝ նշելով, որ դա կլինի մարդասիրական աղետ: Բարոնուհին նաև ընդգծել է, որ քաղաքացիական բնակչության

նկատմամբ բռնութիւններն իբրեւ ագրեսիա սահմանելու չափորոշիչները պետք է միանշանակ լինեն բոլոր տարածաշրջանների համար։

Text Link




## Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

# Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի յայտարարութիւնը

Ազրպէյճանի լկտի պահուածքը եւ սանձազերծած դաժան քաղաքականութիւնը պէտք է արժանանայ միջազգային հանրութեան ամենախիստ գնահատականին։ Անտարբերութիւնը կարող է աւելի սարսափելի հետեւանքներ ունենալ, եւ քաջալերէ, որ թշնամին նոր սպառնալիքներ հնչեցնէ։ Արցախի ժողովուրդը կը շարունակէ ամուր կանգնիլ իր հողին վրայ։ Արցախը հայկական աշխարհի անբաժանելի մասն է, որու հետ կապուած ենք արեամբ, հոգիով ու սրտով, մշակոյթով ու պատմութեամբ։
Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբը, դատապարտելով Ազրպէյճանի սադրանքները Արցախի Հանրապետութեան ուղղութեամբ, յառաջիկայ օրերուն պիտի դիմէ օտար պետութիւններու դեսպաններու եւ միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, մատնացոյց ընելու Ազրպէյճանի ոտնձգութիւնները, պահանջելով, որ միջամտեն կասեցնելու թշնամիին անընդմէջ սադրանքները։

Text Link



Երկուշաբթի, 4 Ապրիլ 2022-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները, յուշագիրներ յանձնեցին՝ Ռուսական Դաշնութեան, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի Դեսպանատուներուն, դատապարտելով Ազրպէճանի սադրանքները, որոնք նպատակ ունին հայաթափելու Արցախը։

On Monday, April 4, 2022 at 10:00 am, representatives of the Armenian National Committee of Cyprus handed over a petition to the Embassies of the Russian Federation, the United States and France, condemning the military advances of the Azerbaijani army and other hostile acts that are aimed at forcing the civilian population to flee from their ancestral lands.

## Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

# ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Շարք Մը Դեսպաններու Յղեց Արցախի Մէջ Ստեղծուած

## Կացութեան Վերաբերեալ Նամակ Մը

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի, Լեհաստանի, Բրիտանիոյ, Գերմանիոյ, Շուէտի, Իտալիոյ, Նետերլանտներու, Դանիոյ, Չեխիոյ, Արժանթինի, Չիլիի եւ Պրազիլի դեսպաններուն յղեց հետեւեալ նամակը.
«Ազրպէյճանական բռնագրաւող ուժերուն կողմէ Արցախը բնական կազով մատակարարող խողովակի դէմ գործուած խափանարարական արարքին պատճառով՝ Արցախի ամբողջ տարածքը 7 մարտէն ի վեր զրկուած է կազէն: Կազի մատակարարման դադրեցումով Արցախի աւելի քան 100 հազար խաղաղ մարդու համար յառաջացած են մարդասիրական լուրջ խնդիրներ :
Դէպքը պատահեցաւ Շուշիի՝ Ազրպէյճանի կողմէ բռնագրաւուած հատուածին մէջ: Ազրպէյճանական կողմը կը խուչընդոտէ եւ չ՛արտօներ, որ «Արցախկազ» ընկերութեան մասնագէտները վերականգնեն կազի մատակարարումը, ինչ որ առաւել յստակ կը դարձնէ անոնց յանցաւոր դիտաւորութիւնը:

Text Link

## ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Ողջունեց Արցախի Մշակութային Ժառանգութեան Ոչնչացումը Դատապարտող Բանաձեւի Որդեգրումը



ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Ռալֆ Թրաֆին յղեց նամակ մը՝ ողջունելով Եւրոպական խորհրդարանին կողմէ ճնշող մեծամասնութեամբ որդեգրուած բանաձեւը, որ բուռն կերպով կը դատապարտէր Ազրպէյճանի կողմէ Արցախի մէջ մշակութային ժառանգութեան ոչնչացման քաղաքականութիւնը:
Հայ դատի մարմինը Եւրոպական յանձնաժողովին կոչ ուղղեց՝ դատապարտելու Պաքուի յարձակողապաշտ ու ծաւալապաշտ քաղաքականութիւնը եւ Ազրպէյճանի բռնատիրական վարչակարգին կոչ ուղղելու՝ հրաժարելու Հայաստանի Հանրապետութեան տարածքներուն նկատմամբ ախորժակներէն եւ դադրեցնելու այդ ուղղութեամբ սադրանքները, ինչպէս նաեւ վերադառնալու ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութեան հովանաւորութեամբ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման հոլովոյթին:

Text Link

## ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Արցախի Մէջ Վերջին Զարգացումներուն Հարցով Կապ Հաստատեց Լիբանանի Մէջ Շարք Մը Դեսպանատուներու Հետ

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը անցնող օրերուն Արցախի մէջ արձանագրուող վերջին զարգացումներուն հարցով կապ հաստատեց ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներու եւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի անդամ երկիրներու դեսպանատուներու հետ:
Text Link

# ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Լիբանանի Մէջ ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղարի Անձնական Ներկայացուցիչին Յղեց Նամակ Մը

«Ազրպէյճանի մէջ ՄԱԿ-ի գրասենեակը 18 մարտին վերջերս բռնագրաւուած Շուշիի մէջ մասնակցեցաւ Ազրպէյճանի՝ ՄԱԿ-ի անդամակցութեան 30-ամեակին նուիրուած ձեռնարկին: ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը բուռն կերպով կը դատապարտէ ՄԱԿ-ի գրասենեակին մասնակցութիւնը այդ ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Արցախի Հանրապետութեան հայկական պատմական այդ քաղաքին մէջ, որ գրաւուեցաւ պատերազմի մը ընթացքին, որուն ընթացքին ազրպէյճանական բանակը բազմաթիւ եւ լուրջ պատերազմական յանցագործութիւններ գործեց: ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներու (Միացեալ Նահանգներ, Ռուսիա եւ Ֆրանսա) դեսպանները իրաւամբ մերժած էին մասնակցիլ այդ վայրին մէջ տեղի ունենալիք ձեռնարկին: Ազրպէյճանի մէջ ՄԱԿ-ի ներկայացուցիչը պէտք էր հետեւէր միջնորդութեան միջազգային լիազօրութեան տէր միակ մարմինի անդամ պետութիւններու օրինակին: ՄԱԿ-ի ներկայացուցիչը ձեռնարկին մասնակցելով որդեգրեց ազրպէյճանական պնդումը, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապն ու անոր կարգավիճակի հարցը լուծուած են, երբ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի վերոնշեալ անդամները հակառակը կը յայտարարեն. անոնց յայտարարութիւնը նաեւ կը վերաբերի Շուշիին:

Text Link

## Հայ դատի Սիրիայի յանձնախումբ

# «Արդարացի լուծում-Հատուցումներ Հայոց ցեղասպանութեան» գիտահրատակական հրատարակութեան Հալէպի մէջ տպուած արաբերէն թարգմանութեան ներկայացում




Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի, Նախաձեռնութեամբ Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբին, Հինգշաբթի, 24 Մարտ 2022-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ «Արդարացի Լուծում-Հատուցումներ Հայոց Ցեղասպանութեան» գիտահրատակական հրատարակութեան Հալէպի մէջ պատրաստուած եւ տպուած արաբերէն թարգմանութեան ներկայացումը: Ձեռնարկին ներկայ էին Հալէպի մուֆթին, Կրօնական կալուածներու տնօրէնը, հայ, իսլամ եւ քրիստոնեայ կրօնապետներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ, Սուրիոյ Պաաս, ազգային եւ համայնավար կուսակցութեանց, ինչպէս նաեւ Աղեքսանտրեթի միութեան եւ այլ հասարակական միութիւններու ներկայացուցիչներ, հալէպահայ միութիւններու եւ տեղական լրատուամիջոցներու ներկայացուցիչներ, Հալէպի համալսարանի դասախօսներ, դեկաններ, Սուրիոյ ազգային լեզուներու բարձրագոյն ուսումնարանի տնօրէնը, իրաւաբաններ եւ արհմիութիւններու ներկայացուցիչներ:

Text Link

## Հայ դատի Քուվէյթի յանձնախումբ

# Հանդիպում Քուվեյթում ՀՀ դեսպանությունում



Հինգշաբթի, 24 Մարտ 2022-ին Քուէյթի Հայ Դատի յանձնախումբը այցելեց ՀՀ դեսպանատուն եւ հանդիպեցաւ Արտ. եւ Լիազօր դեսպան Պրն. Սարմէն Պաղտասարեանի ու նորանշանակ հիւպատոս՝ Պրն. Արա Մաթեւոսեանի հետ։
Հանդիպման ընթացքին յանձնախումբիս ատենապետ՝ Պրն. Ժան Մոմճեան շնորհաւորանքի խօսք փոխանցեց դեսպանի ստացած նոր տիտղոսի առիթով նաեւ հիւպատոսին ստանձնած պաշտօնին կապակցաբար մաղթելով նորանոր յաջողութիւններ իրենց գործունէութեան ընթացքին։
Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info